ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 29-Լ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՎՅԱԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 20.2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 751-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Սահմանել տրանսպորտային միջոցը շահագործող անձի կողմից իր անձնական տվյալները տրամադրելու վերաբերյալ գրավոր համաձայնության և տվյալ տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար վարչական պատասխանատվություն կրելու վերաբերյալ գրավոր պարզաբանման ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ գրավոր համաձայնությունը և գրավոր պարզաբանումը հաստատվում է թվային ստորագրությամբ:

ԳՆԴԱՊԵՏ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«25» 06 2021թ.

ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ոստիկանության պետի 2021
թվականի հունիսի 25-ի N 29-Լ
հրամանի

Ձև

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ես՝ _____, համաձայն եմ
անուն, հայրանուն, ազգանուն

տրամադրել իմ անձնական տվյալները՝ ինձ որպես _____ մակնիշի (մոդելի), _____
տրանսպորտային միջոցի մակնիշը (մոդելը) նույնականացման (VIN) համարը

նույնականացման համարով (VIN) տրանսպորտային միջոցը շահագործող անձ կցելու նպատակով:

Միաժամանակ հավաստում եմ, որ ինձ պարզաբանվել է, որ որպես հաշվառվող տրանսպորտային միջոցը շահագործող անձ կցվելու դեպքում, այդ տրանսպորտային միջոցով կատարված և տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար ես կարող եմ կրել վարչական պատասխանատվություն:

Ստորև ներկայացնում եմ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 20.1-ին մասով պահանջվող տեղեկությունները՝

1) _____
Հանրային ծառայությունների համարանիշը

կամ

2) _____,
Անձը հաստատող փաստաթղթի սերիա, համար, տրման օր, ամիս, տարեթիվ, ում կողմից է տրվել

3) _____:
Վարորդական վկայականի սերիա և համար

_____ _____
Շահագործող անձի անուն, հայրանուն, ազգանուն Ստորագրություն

«____» _____ 20 թ.

Ք._____